

ԹՈՒՆԱՎՈՐ
ՅԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ
ԲՈՒՅՍԵՐԸ
ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ



632.5

\$-44

Ն. Ն. ՖԵՍԵՆԿՈՎ ՅԵՎ Ո. Մ. ՊՈԼՅԱԿՈՎԱ

632

Ց-44

Թ Ո Ւ Ն Ա Վ Ո Ր
Յ Ե Վ Վ Ն Ա Ս Ա Կ Ա Ր
Բ Ո Ւ Յ Ս Ե Ր Ը
Կ Ե Ն Դ Ա Ն Ի Ն Ե Ր Ի Ջ Ա Մ Ա Ր

Թարգմ. ՈՀ. ՅՈՀԲԱՐՅԱՆ

ՆՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈԼՄԻՑ

Այս գիրքը թարգմանելիս մենք՝ տերմինալոգիայի ասպարիզում հանդիպել ենք մի շարք լուրջ դժվարությունների: Թեև, բազմիցս անգամ, միշտ էլ ասվել ու գրվել է մասնաւոր՝ հանրածանոթ տերմիններ ունենալու մասին, բայց ցավոք սրտի պէտք է ասել, վոր այդ խնդիրը շատ քիչ, կամ համարյա բոլորովին տեղ չի գտել դժգոհատնտեսական գրականության բնագավառում: Բույսերի անունները՝ առավել ևս թունավոր բույսերի՝ վորոնք տարբեր շրջաններում տարբեր անուններով են գործածվել, ընդհանուր բարդություն են հարուցում թարգմանչի համար—ընդհանուր, համեմատաբար և վոր կարեւորն է հասկանալի տերմիններ կիրառելու համար: Ըստ վորում թարգմանիչը շատ թունավոր բույսերի անուններ գործածել է տեղական բարբառով:

Հաշվի առնելով, վոր գիրքը զխավորապես լիսելու յե դժգոհատնտեսների, ագրոտեխնիկների, անասնաբույժների համար սեղանի գիրք, մենք նպատակահարմար համարեցինք տեքստի մեջ նաև թունավոր բույսերի ուսերեն կամ լատիներեն անունները, այլ վերջում կազմել հատուկ բառարան:

Համոզված ենք, վոր այս հանգամանքը հնարավորություն կտա բոլոր մասնագետներին, կոլտնտեսականներին, ցարձիր բանակում, այդ ուղղությամբ աշխատողներին, մոտիկ ծանոթանալու գրքին կցված բառարանի հայկական տերմինալոգիայի հետ, հետագայում կիրառելի դարձնել թե պրակտիկ և թե գրական աշխատանքներում:

Ի դեպ՝ թարգմանիչը շատ բարեխղճորեն հավաքել է Մյասնիկյան շրջանից թունավոր բույսերի այդ գործածական անունները, վորոնք արդեն քաղաքացիականություն են ստացել բոլոր կոլտնտեսականների մեջ:

ԱՌԱՋԱԲԱՆ

ԿԿ-ի և ԺԿՍ-ի 1931 թ. հունիսի 30-ի դիմումի մեջ ասված է. «Կայուն կերային բաղայի ստեղծումը անասնաբուծական խորհրդատեսությունների և ապրանքային կոլտնտեսական ֆերմաների աշող ծավալման վճռական պայմանն է հանդիսանում:

Սրա հետ կապված խոշոր նշանակություն է ստանում նաև կերերի վորակի բարձրացման կոնվը, վորից խոշոր չափով կախումն ունի վոչ միայն կենդանիների արտադրողականությունն, այլ և հաճախ հենց իրենց՝ կենդանիների պահպանությունը:

Ոոսելով կայուն կերային բաղայի և կերերի լավ վորակի մասին, չի կարելի աչքաթող անել այն բույսերը, վորոնք պատահում են մեր սարգագետիններում և արոտատեղերում, և վորոնք պարունակելով իրանց մեջ կենդանիների համար ֆեատակար և թունավոր նյութեր, սոցիալիստական անասնաբուծության ֆեատ են բերում: Այդպիսի բույսերն ընկնելով կերի մեջ, առաջացնում են հիվանդություններ, ախտաբանների մահ, վիժումներ, իջեցնում են նրա արտադրողականությունը, փչացնում են մթերքները (կաթ, բուրդ և այլն):

Դասակարգային թշնամին միանգամ չե, վոր ոգտվել է այդ բույսերով, վորպեսզի հարվածներ հասցնի սոցիալիստական անասնաբուծության:



Ամբողջապես հուշս դնել այն բանի վրա, թե կենդանիներն իրանք բնազդորեն կխուսափեն ֆլաուսկար և թունավոր բույսերից, վոչ մի դեպքում չի կարելի, վորովհետեւ պրակտիկան ցույց ե տալիս, վոր թունավորումները, չնայած կենդանիներին զգուշության, բավական հաճախ են պատահում, առաջացնելով ծանր հետեանքներ:

Սույն դրքույկում մեջ ե բերվում կենդանիների համար գլխավոր թունավոր և ֆլաուսկար բույսերը, վորոնք պատահում են Հյուսիսային Կովկասում: Անհրաժեշտ ե, վորպեսզի անասնաբուժության մեջ աշխատողները, Գարմիր բանակի աշխատողները, խոտամթերիչները, խոտի վերատեսուչները և ուրիշները ճանաչեն այդ բույսերը:

Նրանց ճանաչելը հատկապես կարևոր ե այն անձանց համար, վորոնք անմիջապես զբաղված են կենդանիներին կերակրելով՝ հոտաղներին, կով կթողներին, ձիապաններին և մյուսներին:

Վնասակար և թունավոր բույսերին ճանաչելը անհրաժեշտ ե վոչ միայն նրա համար, վորպեսզի կենդանիներին կերակրելու ժամանակ նրանցից խուսափեն, այլ և նրա համար, վորպեսզի պայքարենք իրանց՝ թունավոր բույսերի դեմ և մաքրենք նրանցից մեր մարդագետիներն, արոտատեղիները և դաշտերը, վորը սոցիալիստական ախտեսության պայմաններում հեշտ իրականանալի յե:

ԹՈՒՆԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎՐԱ

Կենդանիների թունավորումը դանադան կերպով ե արտահայտվում, սակայն ընդհանուր առմամբ նրանց կարելի յե յերկու խմբի բաժանել.

1. Թունավորումը գծացնող բույսերով—վորն արտահայտվում ե ընկնավորությամբ, ջղաձգություններով, զրգռումով, վորը հետո փոխվում ե թուլության և զգայնության կորցնելուն: Այսպես են ներդործում, որինակ, մահացու մորմը (շնախաղող), մուխիինդը, գծախոտը, խաշխաշները, խնդամուխն և մյուսները:

2. Թունավորումը ուտիչ բույսերով—վորն արտահայտվում ե ստամոքսի և աղիքների բորբոքումով, ստամոքսի ցավերով, փորահարինքով, հաճախ արյունով կամ լորձահյութով, արյունալի մեզով և այլն: Այսպես ներդործում են դաժան գորտնուկները, ծիծեռնախոտը, կաղանջանները և ուրիշները:

Հաճախ թունավորումների յերկու տեսակն ել միասին են արտահայտվում:

Պետք ե նկատել, վոր թունավորման աստիճանը և նրա հետեանքը կախումն ունի վոչ միայն կերած արոտի քանակից, այլ և ուրիշ մի շարք պայմաններից: Որինակ՝ յերիտասարդ կենդանիներն ավելի զգայուն են հասակավորնե-

րից: Սոված կենդանիները դատարկ փորով ավելի զգայուն են, քան կուշտերը:

Նշանակութուն ունի նաև կենդանու տեսակը: Ձին սովորաբար ավելի զգայուն է վոչխաբից և աշծից. խոշոր յեղջերավոր անասունը նրանց մեջ միջին տեղն է բռնում: Շատ բույսեր թունավոր են լինում միայն թարմ դրությամբ, իսկ չոր դրությամբ նրանք անվնաս են:

Թունավորության չափը կախումն ունի նաև աճման պայմաններից: Վորոշ տարիներում միևնույն բույսի թունավոր լինելն ավելի ուժեղ է արտահայտվում, քան սովորաբար:

Հետո բույսերի տարբեր մասերը (արմատներ, տերևներ, ցողուններ և այլն) տարբեր աստիճանի թունավոր են կամ լինում են բոլորովին անվնաս:

Ցերեքն բոլորովին անվնաս բույսը մի քանի պայմանների ազդեցության տակ կամ հիվանդությամբ վարակված դեպքում (որինակ՝ հնձեղուց հետո, կանաչած սորգոն բույսի փոշխուենկով (մրիկ, գոնա) կամ փտախտով վարակված դեպքում) թունավոր և վնասակար է դառնում:

Ահա այս պատճառով թունավոր բույսի միևնույն քանակը կարող է բոլորովին տարբեր կերպով ներգործել կենդանու առողջության վրա:

Թունավոր բույսերի մեծամասնութունը վտանգավոր է նույնպես և մարդու համար: Հայտնի յեն բազմաթիվ վտանգավոր թունավորումների դեպքեր մոլեխնինդով, տերևատով, շնակարոսով և մի շարք ուրիշ բույսերով: Այս հաճախ առաջ է գալիս շատ թունավոր բույսերի կուլտուրականներին նման լինելուց: Յերեխաները սովորաբար ուտում են թունավոր հատապտուղներ, գայթակղվելով նրա գեղեցիկ տեսքով:

Թունավորներից տարբեր, վնասակար բույսերը կենդանիների թունավորում չեն առաջացնում, բայց ազդում են

նրանց առողջության վրա, վնասակար բույսերը իջեցնում են արտադրողականութունը, կամ փչանում են մթերքների վորակը, փոխելով կաթի, յուղի և մյուսների համը և գույնը, մեխանիկական վնասներ են հասցնում իրանց փշոտ կամ հոշտ մասերով, հալվելով ստամոքսի, բերանի պատերին, խճճելով բուրդը և այլն:

Վնասակար և թունավոր բույսերի մեջ կտրուկ սահման դնել ամեն ժամանակ հնարավոր չէ և հաճախ միևնույն բույսը նկարագրվում է մերթ իրբ վնասակար, մերթ իբրև թունավոր:

Այս կախումն ունի նույնպես այն բանից, վոր շատ բույսեր դեռ ևս բավականաչափ լավ չեն ուսումնասիրված:

Կենդանիների թունավորումը տեղի յն ունենում վոչ միայն թարմ արոտ (արոտատեղում) ուտելուց, այլ և խոտից, վոր շատ արոտներ իրենց թունավորութունը պահպանում են նաև չոր դրությամբ: Վտանգավոր են լինում յերբեմն և այնպիսի կերեր, ինչպես որինակ, հատիկը, տակուցքը, թեփը, ալյուրը և այլն: Դա առաջանում է այն պատճառով, վոր նրանց մեջ ընկնում են թունավոր սերմեր, վորոնք առաջացնում են թունավորումներ:

ԿՈՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԹՈՒՆԱՎՈՐ ՅԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԲՈՒՅՍԵՐԻ ԴԵՄ

Առաջին հերթին թունավոր և վնասակար բույսերի դեմ կռիվը պետք է հանդի նախազգուշացողական միջոցների մեջ, վորովհետև կենդանուն թունավորվելուց պահպանել միշտ ավելի հեշտ է քան բժշկելը: Այս միջոցներից լավագույնները նրանք են, վորոնք հանգում են կենդանաբուժության վնաս հասցնող բուսականության անմիջական վաճառման մեջ:

Դրան կարելի չե հասնել. 1) բույսերը հնձելով կամ քաղահան անելով, թույլ չտալ նրանց սերմակալել, 2) անասուններին մի ուրիշ արտ տեղափոխելուց հետո, չարածված բույսերը հնձելով, վորովհետև սովորաբար մնացորդները պատկանում են ֆլասակար, չուտվող, կոշտ արտաներին: 3) խոտհարքից առաջ խոտատեղիների վրա գտնված թունավոր և ֆլասակար արոտների հեռացնելը և վոչնչացնելը կատարվում է գլխավորապես այն նպատակով, վոր նրանք չկարողանան խոտի մեջ ընկնել և կենդանիների համար վտանգավոր դարձնել նրան:

Մեծ նշանակություն ունի գոյություն ունեցող հողաբաժինների լավացումը այնպիսի ագրոտեխնիկական միջոցներով, — ինչպես հերկը, սկավառակումը, լավ արոտների ցանքսը և այլն:

Շատ խոնավ կամ ճահճացած տեղերում լավ միջոց է հանդիսանում նրանց չորացնելը, վորովհետև շատ թունավոր բույսեր տարածվում են հենց այդպիսի տեղերում և չորացնելուց հետո վոչնչանում են:

Սերմացվի մաքրելը նախադրուշացնում է վտանգավոր մոլախոտերի անցնելը դաշտերի և մարդադետինների վրա: Վնասակար և թունավոր բույսերի դեմ նախադրուշացման միջոցներից մեկն էլ հանդիսանում է նմանապես արոտատեղիների, խոտատեղերի, պատրաստի խոտի և ուրիշ կերերի նախապես նայելը և խոտանումը:

Ա.Պո-ին կից ստանդարտիզացիայի Համալուծենական կոմիտեն բաց է թողել, այսպես կոչված, «խոտերի ստանդարտներ» (4994), վորոնց մեջ նշված են ֆլասակար և թունավոր բույսերը և նրանց սահմանային քանակությունները, վորոնք թույլատրելի չեն խոտի մեջ: Այդպիսի ստանդարտները մեծ ոգուտ են բերում խոտի արժեքավորման և կենդանիներին կերակրելու համար՝ նրա պիտանիությունը վորոշելու ժամանակ:

Բուսականության լայն ծանոթությունը պետք է սցիալիստական անասնաբուժական աշխատողների պրակտիկայի մեջ մտնի: Մասնավորապես հոտաղը, վորի վրա մեծ պատասխանատվություն է դրվում նրան հանձնված կոտնտեսական կամ խորհտնտեսական նախրի պահպանության համար, պարտական է լավ իմանալ իր հողածածկը, նրանց բուսականության կազմը, վորպեսզի ժամանակին պահպանի կենդանիներին թունավոր բույսեր ուտելուց:

Յուրաքանչյուր խրճիթ-ընթերցարանում, կարմիր անկյունում, դպրոցում պետք է տեսանելի տեղում կախել թունավոր բույսերի հերբարիումն՝ կոլանտեսականներին և խորհտնտեսությունների բանվորներին նրանց հետ լայն կերպով ծանոթանալու համար:

Առանձին ուշադրություն պետք է դարձնել վստահելի, դասակարգայնորեն տոկուն բրիգադիներին, հոտաղներին, հովիվների և անասուններին խնամող բանվորների ընտրության վրա: Կուսակցական, խորհրդային, կոլտնտեսային և խորհտնտեսային կադակերությունները պետք է դասակարգային մեծ աշարջություն հայտնաբերեն, վորպեսզի դասակարգային թշնամին չկարողանա ոգտվել թունավոր և ֆլասակար բույսերով և ֆլաս հասցնել սոցիալիստական անասնաբուծության:

Կենդանիների հիվանդության կամ թունավորման դեպքում անհրաժեշտ է անհապաղ կերպով դիմել անասնաբուժին: Հետո, ինկատի ունենալով, վոր տեղում միշտ կա-րելի չե հայտնաբերել, թե ինչն է առաջացրել հիվանդությունը, ոգտակար է կել/երը ԲՈՒՀ-երին, գիտական-հետազոտական հիմնարկներին հետազոտության տալ: Այս հիմնարկների ոգնությունը կարելի չե հայտնաբերել թունավոր բույսերի պարունակությունը կերերի մեջ:

Մարդկանց թունավորման դեպքում նույնպես անհրաժեշտ է անհապաղ դիմել բժշկի ոգնության:

ՅԵՐԿՐԱՄԱՍԻ ԹՈՒՆԱՎՈՐ, ՎԱՅՐԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Յիրդ (պատկանում է փշատերև բույսերին) տեսնվ. 1՝ մշտականաչ թուփ է փռված կամ բարձրացած ճյուղերով, մինչ 3 մետր բարձրությամբ: Մատաղ ճյուղերի վրա տերևները նշտարած են: Բույսի հին մասերի և ծաղկակիր ճյուղերի վրա տերևները թեփուկավոր, ցողունին խիտ կեղևով կալած են: Պտուղները միայնակ են, նման հատապտղի, կառավրկները՝ կապտավուն սև:

Թունավոր են բույսի բոլոր մասերը, առանձնապես ճյուղերի վերին մասերը:

Թունավորումը արտահայտվում է աղեստամոքսային հիվանդությամբ, յերիկամաքանների բորբոքումով, վիժումներով: Պատահում է ավազային, կավճային հողերի վրա և անտառներում:


Նկատագրություն. Մյուս փշատերևներից պետք է նշել կարմրածաղ (գեղձի), սոճին, յեղևին, վորոնց փշերը մեծ քանակությամբ ուտվելով առաջացնում են արնոտ մեղ կամ վարսողության գործարանների բորբոքում: Իբրև հեր փշատերևները կարելի չէ գործածել միայն քիչ քանակությամբ, թեև այն ժամանակ ել նրանք առաջացնում են կաթի վատ համը:

2. Սքեռ կամ ազաբիսն. (պատկանում է յերկղաքիլավորներից կիրկազոնների ընտանիքին): տ. նկ. 2.: Բազմամյա յե, շատ ցածր հասակով, թավամազ, սողացող ճյուղավոր կոճղաբնածով, սովորաբար յերկ-յերկու յերիկամա-սրտածև տերևներով: Ծաղիկները միայնակ, դանգակաձև, կախ ընկած, մութ ծիրանագույն: Պտուղը — վեցաբնիկ տուփիկ:


Թունավոր է ամբողջ բույսը:

Պատահում է սովերախիտ տեղերում ինչպես և անտառներում:

Կրկազոն կամ սղանգ. (ֆիլիոնին կիրկազոնների ընտանիքից). տես նկ. 3. Խոտանյութ բաղամյա յե մինչև 90 մետր բարձրությամբ: Ցողունը զալարուն, մերկ: Տերևները սրտաձև: Ծաղիկները հավաքված են փնջերով և տերևների անկյունում, բաց



1. Յիրդ



2. Սքեռ կամ ազաբիսն

դեղնավուն, լեղվաձև ծաղկածքով, հիմքի մոտ ուռուցիկ: Պտուղը — տանձաձև կախնկածառուփիկ:

Թունավոր է ամբողջ բույսը:


Թունավորումն արտահայտվում է սկզբում կենդանու հուլմունքով, հետո թմրածությամբ, ստամոքսի և աղիքների բորբոքումով: Թունավորումը նկատվել է ձիերի և խոշոր յեղջերավոր անասունների մեջ:

Պատահում է ամբողջ յերկրամասում, թփերի մեջ, գետափնյա ջրակալած թավուտներում:

4. Թմբցնոզ կամ բունավոր վորոն (դյուլալ) (մեխակների ընտանիքից): Տես. նկ. 4. միամյա յե, գլխավորապես

պատահում ե իբրև մոլախոտ դարնանացան, ավելի քիչ աշ-
նանացան հացարույսերի մեջ:

Ցողունը 30 — 60 սմ բարձրությամբ պարզ ե կամ քիչ
ճյուղավորված, ծածկված ե, ինչպես և տերևները, մաղիկ-



3. Կրկագոն կամ սղանգ


ներով: Ծաղիկները մեծ մասամբ մութ-կարմրագույն, հնգա-
տիպ են: Պտուղը-տուփիկ ե: Սերմերը խոշոր, կլոր-յեռան-
կյունաձև, սև և խորտուրտ մակերևութով, թունավոր:

Անասունը, վորովը արմատի վրա յեղած ժամանակ, չի
ուտի: Միաժամանակ հացահատիկները հետ հասունանալով,
վորովը կեղտոտում ե հատիկները և հարդը:

Վորովով թունավորումը տեղի յն ունենում գլխավորա-
պես ալյուրի կամ թեփի միջոցով, վորի մեջ նա ընկնում ե
աղալու ժամանակ:



4. Թմբեցնոց կամ բունավոր
վորով



5. Աստղածաղիկ

Վորովի թույնը գրգռում ե լորձաթաղանթները, կաթ-
վածում ե նյարդային համակարգությանը և սիրտը: Վորովի
վերաբերմամբ ավելի զգայուն են ձիերը և յերիտասարդ
կենդանիները:

5. Աստղածաղիկ (Ձիու մոլեխինդ մեխակների ընտանի-
քից): Տես նկ. 5. ցողունը բարակ, 20-ից մինչև 60 սմ բարձրու-

Թյամբ վերամբարձ, ճյուղավոր: Տերևները նեղ, հակադիր: Ծաղիկները մանր, սպիտակ, աստղաձև: Ծաղկափունջը — ճյուղատարած: Պտուղը — փոքր տուփիկ: Թունավոր է Թարմ արոտը և խոտը ձիերի համար, վորոնց վտանքն է խոցում:

Պատահում է ամբողջ յերկրամասում մարզադեպիներին վրա, դաշտերում և թփերի մեջ:

ԹՈՒՆԱՎՈՐ ԲՈՒՅՍ ՀՐԱՆՈՒՆԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻՑ

Հրանունկների ընտանիքը հանդիսանում է ավելի հա-
րուած Թունավոր ներկայացուցիչներով: Անասունը արոտա-
տեղում սովորաբար չի ուտում նրանց. մի քանի հրանունկ-
ների Թունավոր հատկութունը պահպանվում է նաև
խոտի մեջ:

Հրանունկների Թունավոր հատկութունների մասին
հարկավոր է առանձնապես հիշել, վորովհետև նրանք խիստ
շատ տարածված բույսեր են: Վոչ մի բույս չի կարելի աչ-
քաթող անել այն, վոր դասակարգային թշնամին, հաշվի
առնելով հրանունկների առավել Թունավոր լինելը, կկարո-
ղանա նրանցից սղավել, վորպեսզի խոտը փչացնի: Նրան
վտանգավոր դարձնել կենդանիների համար և կասեցնել
կոտնտեսային և խորհտնտեսային կենդանաբուծության
զարգացումը:

Հրանունկները ամեն տեղ տարածված են, գլխավորա-
պես խոնավ տեղերում: ԱմենաԹունավորներից նշենք հե-
տևյալները.

Կապույտ քմբախոթ: Տես նկ. 6. բազմամյա բույս է,
մինչև 2 մետր բարձրությամբ: Ցողունը յերկու արմատնե-
րով-պալարներով, հասարակ կամ ճյուղավոր է: Տերևները
խոշոր մատնաձև կտրվածքներով: Ծաղիկները կապույտ
մանիշակագույն, սաղավարտաձև, վողկուղաձև հավաքված:

Թունավոր է ամբողջ բույսը, ինչպես նաև ընդհանրապես
ամբողջ ըմբշխոտների ցեղը:

Թունավորումն արահայտվում է ստամոքսային-աղիքա-
յին հիվանդություններով, շղաձգություններով, ուշագնա-
ցությամբ, մահով:

Ուրիշ ըմբշխոտե-
րից մեզ մոտ պատա-
հում են ակոնիտը կամ
դեղին ըմբշխոտը դե-
ղին ծաղիկներով:



6. Կապույտ քմբախոտ



7. Դաշտային դեղին կամ ամենա

7. Դաշտային դեղին կամ ամենա (սերա չիչակ) (յեղ-
ջերավոր տերեփուկ կամ նաշտ): Տես նկ. 7. Միամյա, մին-
չև 80 սմ բարձր, բարակ, կարծր ցողուններով բույս է:
Տերևները կտրված են մանր, բարակ բլթակների ձևով:
Ծաղիկները սովորաբար կապույտ են յերկար յեղջերանման
հավելվածով:

Անճաղը մեղանում պատահում է տափաստաններում, նմանապես և աշխանացան ցանքսերում. ավելի քիչ դարձա- նացան հացաբույսերի մեջ:



8. Գորտնուկազգի պուտ

Թուշավոր է ամբողջ բույսը, զլխավորապես սերմերը: Անճաղը կարող է վտանգավոր լինել արոտատեղիներում, խոտի և հարդի մեջ:

Վտանգավոր է մանր կեղտոտված հատիկների դարձա- ծուկյունը, վորի մեջ ընկնում են քամհարելու ժամանակ անճաղի սերմերը:

Թուշավորումը—արագ է կատարվում և արտահայտվում է թուքը հոսելով, ջղաձգությամբ, յերբեմն փորլուծությամբ:

8. Գորտնուկազգի պուտ (պտուկ կոտրուկ, պնակ կոտ- րող) (հավկուր). տես նկ. 8: Բազմամյա, վոչ բարձր (սի՛ չե 25 սմ) ցողունով և սողացող կոճղարմատով բույս է: Տե- րևները, յերեքբաժան ատամնավոր բլթակներով, կենտրո- նացած են ցողունի վերին մա- սում, գտնվում է մի-յերկու դե- դին հնգաթև ծաղիկ:

Պուտը պատահում է խոնավ և ճահճահոտ տեղերում, անտառ- ներում, դետերի, լճակների և այլն ավերին: Չորացրած դրու- թյամբ պուտը անվնաս է համար- վում, սակայն ուրիշ ցուցմունք- ների համաձայն նա թուշավոր է նաև չոր դրությամբ:

Պուտը առաջացնում է մեղի ուժեղ արտաթորում: Կաթը ներկ- վում է բայ չարմիր գույնով:

9. Անեմոն, մահացու կամ մոլի մորմ (օճախաղող). տես նկ. 9: Խո- տանյութ բազմամյա, մոտ 30 սմ

բարձրությամբ բույս է: Ցողունը թավոտ է, տերևները փեղբաձև կտրվածքներով: Ծաղիկը զոնգակաձև, մութ մանրակապույտ, զլխախալ, Բույսի բոլոր մասերը Թուշավոր են և առաջացնում են յերկամունքների և մարսողական դործարանների բորբոքում: Պատահում է անտառների յեղ- բերին, դետերի մոտ, Թաղուտների մեջ:



9. Անեմոն, մահացու կամ մոլի մորմ (օճախաղող)

10. Պատաղին (մամրիչ, շիրխա). տես նկ. 10: 4 մետր բարձրությամբ սողացող թուփ է: Տերևները փետրաձև, սըրտաձև կամ ձվաձև տերևիկներով: Ծաղիկներն սպիտակ, հոտալիտ, հալաքլած են յուրաններով (ավելիկների ձևով): Պտուղը — դադին է, ուժոված թուփով: Թարմ դրությամբ ամբողջ բույսը թունավոր է: Թունավորումներն արտահայտվում են ստամոքսային-աղիքային հիվանդություններով:

Պատահում է քարքարոտ տեղերում, թփուտների մեջ և կովկասի անտառներում: Հ. կովկասի յերկրամասի տափաստանային շերտում պատահում է պատաղիճի մյուս տեսակը — վայրի պատաղիճ:



10. Պատաղին (մամրիչ, շիրխա)




11. Դաժան գորսնուկ

11. Դաժան գորսնուկ. տես նկ. 11: Միամյա յե, մինչև 45 սմ բարձրությամբ: Ցողունը սնամեղ է: Ներքևի տերևները յերեքբաժան, վերևի յերեք բլթակ ձեղքված: Ծաղիկները բաց դեղին, հնգաթիպ:

Թունավոր է ամբողջ բույսը. չորացման դեպքում թունավոր հատկությունը պակասում է: Թունավորումն առա-

ջացնում է ստամոքսային-աղիքային հիվանդություններ, ջղաձգություններ, դող, յերբեմն մահ:

Պատահում է խոնավ ճահճային տեղերում:



12. Դարմանային շոգավարդ

Տափաստաններում սովորական է իլիքական գորսնուկը — զաղմածյա արծաթափայլ-մետաքսանման բույս է: Իսկ լեռնային մաիգաճեղիներում պատահում է կովկասյան գորսնուկը:

12. Գառնաճալին ռոգավարդ (աղոնիս, դեղնածաղիկ): Տես նկ. 12. բազմամյա խոտանյութ բույս է 15—30 սմ բարձրությամբ ճյուղավոր կոճղարմատով: Տերևները կրկնալի յռակի նեղ բլթակների ձևով: Ծաղիկները միայնակ վոսկեգույն-դեղին: Կտիկը ձվաձև կարճ կարթով:



13. Յիճգ կամ վազիստաղիկ հաճախյին

Յիճգ կամ վազիստաղիկ հաճախյին. Տես նկ. 13: Բազմամյա բույս է ուղիղ, վերամբարձ ցողունով, մինչև 50 սմ բարձրությամբ: Տերևները հարթ, յերկամաձև կամ սրտաձև, սափրականթ, վերնանիստ: Ծաղիկները խոշոր, վառ դեղին:

Ամբողջ բույսը շատ թունավոր է, թարմ և չոր դրուժյամբ ազդում է սրտի վրա:

Պատահում է կուրանի տափաստաններում, յերկրամասի հյուսիսային և միջին մասերում և լեռնային մարգագետիններում:

Մերձագործյան տափաստաններում պատահում է վոգլյան ռոգավարդը, վորը նախորդից տարբերվում է ավելի փոքր չափի ծաղկով և ցողունով, պտուղ ունեցած ժամանակ գլխակոր գազաթով: Դիտողությունների համաձայն, կենդանին արոտատեղում նրան չի դիպչում:

Թունավոր է թարմ դրուժյամբ, առանձնապես ծաղկման ժամանակ: Խոտի մեջ թունավոր հատկությունն անհետնում է: Սովորաբար կենդանին ցինգ չի ուտում: Թունավորումը պատահում է ավելի հաճախ գարնան, յերբ կենդանին հարձակվում է կանաչ արոտի վրա: Թունավորումն արտահայտվում է թուքի հոսելով, փորացավով, սրբատառանությամբ, փխսով, սև արտաթորությամբ, փորագնացությամբ, մեղր կարմիր գույն և ստանում:

Ցինգը պատահում է ստվերաշատ, խոնավ տեղերում — դեռերի ափին, խոնավ մարգագետիններում, ճահիճներում: Մյուս գորտնուկազգիներից պատահում են քնձմեռուկները, վորոնց թունավոր լինելը քիչ է ուսումնասիրված:

ԹՈՒՆԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐԸ ԽԱՇԽԱՇԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԻՑ

14. Միժեռնախոտ. տես նկ. 14. բազմամյա, ճյուղավոր ցողունով մինչև 30 — սմ բարձրությամբ բույս է: Տերևները ներքևում բաց թուխ կապավուն են, վերևում դեղնականաչ, փետրավոր, ձեղքվածքներով: Բույսը կոտրվելիս արտադրվում է թունավոր, դեղին կաթնանյութ: Ծաղիկները մանր, դեղին: Պտուղը — տուփիկ է, նրան խաչածաղիկ բույ-



14. Միժեռնախոտ

սերի փոճուկին (խճիխ, մանանեխի և այլն): Սերմերը բաղ-
մաթիվ են, մանր:

Չորացնելիս թունավոր հատկությունը պահպանվում է,
վորի համար ել ծիծեռնախոտը խոտի սեջ ել վտանգավոր
է: Կենդանիներին (ձիեր, խոշոր յեղջերավոր անասուն) կե-



15. Ինֆնացան խաշխաշ

վոր է, առանձնապես խաղ տուփիկները: Թունավոր է, ինչ-
պես թարմ, նույնպես և չոր դրությամբ: Նախաշներով
թունավորումը առաջացնում և կատաղության տառապումն,
ջղաճգություններ, քնածություն, աղիքների բորբոքում:


Պատահում է իրրև մոլախոտ դաշտերում, բլուրների վրա,

աղբոտ անդերում: Կտրող և վտանգավոր լինել քոլոտ խոտի
և հարդի մեջ:

ԹՈՒՆԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐԸ ԽՍՁԱԾԱՂԻԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻՑ

Այս ընտանիքի բույսերն ունեն խաչաձև դասավորված
ծաղկի պսակաթերթիկներ, վորից և առաջացել է այս ըն-
տանիքի անունը: Ծաղիկ-
ների գունավորումն ամենից
ավելի հաճախ դեղին է,
բայց պատահում է մանիշա-
կագույն և սպիտակն ել:
Ցողունը ուղիղ է: Տերևները
կտրվածքներով, յերբեմն
ամբողջական, հաճախ մա-
ղիկներով ծածկված: Պտու-
ղը — փոճուկ կամ փոճուկիկ,
մանր սև կամ կինամոնա-
գույն սերմերով: Նախածա-
ղիկների մեջ կան միավյա և
բազմավյա բույսեր: Տիրող
են առաջինները:

16. Վայրի դրությամբ
աճող խաչածաղիկներից մեկ
մոտ հաճախ պատահում են
խճի, կանթեղախոտ, վայրի
բողկ և մի շարք ուրիշներ:
Տես նկ. 16. Այս բույսերը
պարունակում են ուտիչ,
շուտ գոլորշիացող նյու-
թեր, վորոնք կարող են ա-
ռաջացնել իրանի, ստամոք-



16. Վայրի դրությամբ աճող խաչածաղիկ

սի, աղիքների գրգռում և բորբոքում: Հիվանդությունը դեպքեր նկատվում են խոշոր յեղջերավոր անասունների, ձիերի, խոզերի, փոխարների մեջ:

Պատահում են խաչածաղիկները դաշտերում իբրև մոլախոտեր, քիչ ժամանակ հանգստանալու թողնված հողերում, արոտատեղերում:

17. Յերբներանգ Բարավույց (Դառնախոտ է, պատիճավորների ընտանիքից). տես նկ. 17. Բազմամյա յե: Ցողունը վերամբարձ, տերևները փետրաձև: Ծաղկեփունջը գնաձև սպիտակ վարդագույն ծաղիկներով զլխիկ է: Քարավույցտին վերադրվում է կենդանիների վրա լուծողական ներգործություն: Նրա սերմերը ֆուսսակար են ձիերին: Քարավույցտի սերմերի խառնուրդն ալյսերի մեջ տալիս է նրան դառն համ:

Պատահում է տմբողջ յիրկրամասում, դաշտերում, մարգագետիններում, բնակարանների մոտ իբրև մոլախոտ:

18. Կաղանջան (կաղանջանների ընտանիքից). տես նկ. 18. Նրանք մեղ մոտ պատահում են շատ տեսակներով — «վորթի», «կրճկա»:

17. Յերբներանգ Բարավույց

«յին», «ձողիկային» (տափաստաններում) և «բարձր» մարգագետիններում:

Կաղանջանների ցողունն ուղիղ է և բազմաթիվ տերեխիկներով: Ծաղկափունջը — հովանոցներ են դեղնակապույտ ծաղիկներով: Բույսը կտրվելիս դուրս է գալիս սպիտակ կաթնաեյուղ, վորն ունի թունավոր հատկություն: Կաղանջան-



ները լիտանգավոր են, ինչպես թաբ, նույնպես և չոր դրուծթամբ:

Թունավորումն արտահայտվում է բերանի խորշի, ստամոքսի, աղիքների բորբոքումով: Կթված կենդանիների կաթը ստանում է կարմիր գույն, վորի ժամանակ նրա արտադրությունը պակասում է կամ բոլորովին դադարում է: Չպետք է խառնել իսկական կաղանջանները բարձածաղիկների ընտանիքից ուրիշ բույսերի հետ:



18. Կաղանջան



19. Հիպերիգան



20. Տերևկատ

19. Հիպերիգան կամ հասարակ պսպղակ. (Պսպղակավորների ընտանիքից): Տես նկ. 19. Բազմամյա յե ուղիղ ցողունով 30 — 100 սմ բարձրությամբ: Տերևները հակադիր յերկարավուն — ձվաձև: Ծաղկեփունջը — յուրան (ավել) դեղին — նարնջագույն ծաղիկներով, հնգատալ:

Արտաբ և խոտը խիստ դառնահամ են: Կենդանին պսպղակալն ուտում է անհոժար: Թունավորումը տեղի յե ունե-

նում ավելի հաճախ խոտից: Թունավորման նշաններ են —
յերերացող, անվստահ քայլվածքը, տեսողութեան և լսողու-
թյան թուլացումը, կաշվի քոր դալը:

Ավելի ուժեղ տառապում են յերիտասարդ կենդանիները
և բաց դույնի, առանձնապես ուղիղ լույսի տակ: Այդ պատ-
ճառով թունավորված կենդանուն տեղավորում են մութ
տեղ: Հիպերիզոնը պատահում է դաշտերում, տափաստան-
ներում, անտառային բաց տեղերում:

20. Տերեբինթ (հատապտղիների ընտանիքից) տես. նկ. 20.
վոչ բարձր թուփ է դեղնավուն — մոխրագույն կեղևով և
շյուղերի վրա գորշագույն կոծիծնեով: Տերեբինթը — հեր-
թական, նշտարած, կարճ կանթով, Ծաղիկները վարդա-
գույն կամ ծիրանագույն-կարմիր: Պտուղը ձվաձև, կարմիր
հատապտուղ: Թունավոր է ամբողջ բույսը, առանձնապես
նրա կեղևը:

Թունավորման ժամանակ նկատվում սրտախառնութուն,
փորի մեջ ծակծկոց, փորագնացութուն, ծանր դեպքերում
ջղաձգութուն և մահ:

Պատահում է գլխավորապես յերկրամասի լեռնային ան-
տառներում:

ԹՈՒՆԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐ ՀՈՎԱՆՈՑԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻՑ

21. Բծավոր խնդակոր: Տես նկ. 21. յերկամյա բույս է:
Յոդունը բարձր (մինչև 2 մետր), ուղիղ, լիքը, հիմքի
մոտ կարմրավուն բծերով: Տերեբինթը մութ-կանաչ, յեռան-
կյունաձև, ճեղքվածքներով: Ծաղկեփունջը — հովանոց սպի-
տակ ծաղիկներով: Ամբողջ բույսը խիստ թունավոր է, ա-
ռանձնապես պտուղները: Զորացնելիս թունավոր հատկու-
թյունները պահպանվում են, այդ պատճառով ել խնդակոթը
կարող է վտանգավոր լինել խոտի մեջ: Թարմ դրությամբ
խնդակոթը չի ուտվում կենդանիների կողմից, վորովհետև
ունի մկան տհաճ հոտ և գարշելի համ:

Թույնը ներգործում է կենտրոնական նյարդային հա-
մակարգութեան վրա, վորի ժամանակ նկատվում է զգայնա-
կանութեան կորուստ, թքի հոսելը, բիբերի լայնանալը,
անվստահութուն շարժումների մեջ, արյունոտ փորագնա-
ցություններ, կաթված և մահ շնչառութեան կանգառումից:
Պատահում է ամայի վայրերում, աղբոտ տեղերում, խոնավ
սավերախիտ մարգա-
դեպիներում:

22. (Ջրային) բու-
նավոր մելիսնիզ (ցի-
կուտա). տես նկ. 22.
բաղմամյա յե. Յոդու-
նը հաստ, անամեջ,
բարձր: Տերեբինթը
կրկնակի — յեռակի
խոր կտրվածքներով:
Ծաղկեփունջը — հո-
վանոց սպիտակ մա-
նրը ծաղիկներով:
Ստորերկյա կոճղար-
մատ — հաստացած,
ներսում բաժանված
է միջնապատերով:



21. Բծավոր խնդակոր

Ամբողջ բույսը,
հատկապես կոճղար-
մատը, խիստ թունավոր է, ինչպես թարմ, նույնպես և չոր
դրությամբ: Մոլիսնիզով թունավորվելը արտահայտվում է
ձիերի, խոշոր յեղջիրավոր անասունների, խոզերի մեջ: Թունա-
վորման նշաններն են — ուղադնացություն, թուլություն, կաթ-
վածներ, մահ: Յերեբին լինում են և ստամոքսային-աղիքա-
յին հիվանդություններ: Պատահում են խոնավ տեղերում —
դանդաղահոս ջրերում, ճահիճներում, ափերի վրա:

23. Կերելուկ կամ խնդաթեքի՝ տես նկ. 23: Յերկամյա, յե: Ցողունը կարմրաթավոր, թրաշած, հանդուցների տակ չաստացած է, 30—100 սմ բարձրությամբ: Տերևները յերկ-փետրածև են: Ծաղկեմուկները — հովանոց և առանց սլառ-



22. Թունավոր մոխրխնձ

յանի, ծաղիկները սպիտակ են: Թունավոր և ամբողջբույսը: Կենդանիների թունավորման ժամանակ նկատվում են ատամոքսային—աղիքային հիվանդություններ, փորի ուռչելը,



23. Կերելուկ կամ խնդաթեքի



24. Շնակարոս

հետևի վնասների կաթված: Զգայուն են — ձին, խոշոր յեղջերավոր անասունները, խոզերը — պատահում և թփերի մեջ անտառակներում, աղբոտ տեղերում:

24. Շնակարոս (յերուս). տես նկ. 24. միամյա բույս է, շատ նման է սովորական կարոսին (մաղդանոս), վորից շնակարոսը տարբերվում է գլխավորապես սպիտակ ծաղիկներով, ավելի բարձր հասակով (մոտ 1 մետր): Տերևները յեռանկյունաձև կտրվածքներով, արորելիս տհաճ հոտ են արձակում:

Թունավորումը նրան և խնդակոթով թունավորվելուն, սահաճ շատ ավելի թույլ: Շնակարոսի թունավոր լինելը շատերը բացասում են:

Պատահում է իրրե մոլախոտ ստվերախիտ մշակված հողերում — դաշտերում, բանջարանոցներում, պարտեզներում:

25. Դեղին մրտավարդ (լեռնավարդ հավամրգայինների ընտանիքից): Տես նկ. 25: Թուփ և մոտ 1 ուկես մետր բարձրությամբ: Տերևները բարակ, յերկայնավուն, յեղրերը թարթչաձև: Ծաղիկները ձագարաձև, դեղին, խոշոր: Պրտուղը — տուփիկ, վոր բացվում է 5 փեղկերով: Թունավոր են տերևները թարմ և չոր դրությամբ: Թունավորումն արտահայտվում է փսխելով, թքի հոսելով, փորագնացություններով,



25. Դեղին մրտավարդ

կենդանու շնչվածությամբ: Պատահում է լեռնային անտառներում և Կովկասի նախալեռներում:

26. Լեռնային յերկաթակիր (վեհերախոտ, յերբեմն շան յեղին (փչատամ) շրթածաղիկների ընտանիքից, տես. նկ. 26: Միամյա յե, մոտ 30 սմ բարձրությամբ: Ցողունը ուղիղ



26. Լեռնային յերկաթակիր

կամ ճյուղավոր, ծածկված մաղիկներով: Տերևները հակադիր յերկայնաձիգ — նշտարաձև: Ծաղիկները սկզբում դեղին, հետո մութ կարմրացող: Նրանք ալիքի կարճ են բաժակից, վորի պատճառով վատ են նկատելի:

Ձիերի մեջ առաջացնում է սաստիկ դողի նման հիվանդություն: Դիտողությունների համաձայն խոշոր յեղջերավոր անասունը յերկաթակիրն չի դիպչում:

Պատահում է տափաստանային յերտում քիչ հանգստանալու թողնված հողերում (հետևապես կարող է պատահել քոլոտ խոտի մեջ) և ցանքսերում:

Տերկաթակրի թունավոր լինելու վերաբերմամբ հետադառություններ և ցուցմունքներ զրականության մեջ համարյա չեն պատահում:

ԹՈՒՆԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐ ՍՈՐՄԱԶԳԻՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻՑ

27. Մահացու մարմ. տես նկ. 27- բաղմամյա բարձր (մինչև 13 սմ) ցողունով բույս է: Տերևները խոշոր, ձվաձև, սրածայր: Ծաղիկը հնդատիպ է, կարմրավուն-դորշագույն: Պտուղը սև դնդաձև հատապտուղ է: Ամբողջ բույսը չափազանց թունավոր է, առանձնապես ցողունը և արմատը:

Թունավորումն արտահայտվում է գլխի, ուղեղի և սրտի հեղուկով, կատաղության տառապանքով: Ծանր դեպքե-

րում — ուղեղի կաթված և մահ: Առավել զգայուն են զեպի մահացու մորմը ձիերը և յեղջերավոր անասունները: Խոզերը, աչժերը, վոլխարները, ճագարները սակավ են զգայուն: Կթված կենդանիների մեջ թույնն անցնում է կաթի մեջ, վորը թունավոր հատկություններ է ստանում:

Հյուսիսային Կովկասում մահացու մորմը համեմատաբար ավելի քիչ է պատահում — լեռնային անտառներում:

28. Մոլեխինգ (մկլանկ) (միամյա կամ յերկամյա): Տես նկ. 28. ցողունը պարզ է կամ ճյուղավոր մոտ 3—4 մետր բարձրությամբ: Տերևները խոշոր, կլոր կտրված քնե բոլ (ներհատ) փետրանման բլթաձև, ինչպես և ցողունը,




27. Մահացու մարմ

ծածկված մածուցիկ մաղիկներով: Ծաղիկները կեղտոտ-դեղնագույն, մանրիշակազույն ջղերով: Պտուղը — առափիկ է, վերևում կապարիչով լցված մանր սերմիկով: Ամբողջ բույսը խիստ թունավոր է: Մրմատի վրա յեղած ժամանակ կենդանին չի ուտում մոլեխինգը, վորովհետև նա տհաճ հոտ ունի: Չորացումը չի վնչացնում բույսի թունավոր հատկությունը: Մոլեխինգը

առավելագույն վտանգ և ներկայացնում խոտի մեջ, վերի պատճառով խոտավթերման ժամանակ այն տեղերում, վերտեղ պատահում և մոլեխինդը, հարկավոր և մեծ զգուշություն հայտնաբերել, անհրաժեշտ և ուշադրությամբ հետևել, վորպեսզի մոլեխինդը խոտի մեջ չընկնի, վորպեսզի կու-



28. Մոլեխինդ



29. Հոտած արջընկույզ

լակությունը փաստարարական նպատակներով մոլեխինդը խոտի մեջ չխառնի: Թունավորումը նույն կերպ և արտահայտվում, ինչպես և մահացու մորմի ժամանակ: Պատահում և մոլեխինդը դաշտերում և աղտոտ տեղերում:

29. Հոտած արջընկույզ. տես նկ. 29 — միամյա յե, ուղիղ, ճյուղավոր ցողունով: Տերևները խոշոր, ներհատ — ատամնաձև: Ծաղիկները սպիտակ ձազարած: Պտուղը-դնտաձև փշավոր տուփիկ և սև կնճռոտ սերմերով: Արջընկույզը պատահում և աղբոտ տեղերում, բնակարանների մոտ, ամայի վայրերում:

Թունավոր հատկությունը նույնն է, ինչ վոր մահացու մորմինը:

30. Սեվ մորմ (աղվեսախաղող), տես նկ. 30. Միամյա, դաշտերում, բանջարանոցներում, բնակարանների, ճանա-



30. Սեվ մորմ

պարհների մոտ պատահող բույս է: Ցողունը ճյուղավոր մոտ 1/4 մետր բարձրությամբ: Տերևները ձվաձև, ներհատ-ատամնաձև: Ծաղիկները — սպիտակ մանր, կաղմկած են նույնպես, ինչպես կարտոֆիլները: Պտուղը — սև կլոր հատապտուղ է:

31. Կոզուկ կամ ֆաղցրադառն մորմ. Տես նկ. 31. բազմամյա, խոնավ տեղերում պատահող բույս է: Ցողունը սո-

դացող, ծաղիկները բաց մանիշակագույն (կարմրակապույտ):
Պտուղը — յերկարավուն, կարմիր հատապտուղ է:

Ծորներով թունավորումը արտահայտվում է կենդանու
թուլությամբ, շնվածությամբ, մկանների կաթվածով: Սո-
վորաբար թունավորումը լինում է թույլ, վորովհետև մոր-



31. Կագուկ կամ խիսրադառն մորս

մերի թունավոր հատկությունը շատ չէ: Հայտնի չեն, վոր
նրանց հատապտուղները յերբեմն գործածվում են կերակրի
մեջ: Հավանական է, այստեղ նշանակություն ունեն այն
պայմանները, վորոնց մեջ աճել է մորմը:

ԹՈՒՆԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐ ԽԼԱԾԱՂԻԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻՑ

32. Շնորհախոտ. տես նկ. 32. բազմամյա սողացող կոճ-
դարմատով և վոչ բարձր, ուղիղ կանգնած ցողունով բույս է,
Տերևները մանր, յեղրերն առամիաձև, դասավորված են հա-

կաղիբ: Ծաղիկները սպիտակ կամ վարդագույն սպիտակ:
Շնորհախոտի թույնը ներգործում է լուծողականաբար: Թու-
նավորման նշանները — սաստիկ
փորագնացություն, հաճախ փխ-
սով, ուժից ընկնելը, յերբեմն մահ:
Պատահում է շնորհախոտը առ-

բողջ յերկրամասում, գրվխավո-
րապես խոնավ տեղերում, գետե-
րի, առուների ափերին, խոնավ
մարգագետիններում, թփերի մեջ,
կարող է պատահել մարգագե-
տային խոտի մեջ:



32. Շնորհախոտ



33. Փնջավոր մախախոտ

33. Փնջավոր մախախոտ, տես նկ. 33. — բազմամյա
բույս է, համարյա մերկ, յերբեմն թավամազ: Ցողունը ճյու-
ղավոր չէ, 15 — 50 սմ բարձրությու՛ն ունի: Տերևները հեր-



37. Մատիտեղ

Թունավոր են մատղաշ ընձյուղ-
ները, հատապտուղները և առանձ-
նապես արմատը: Թույնը ներգոր-
ծում է իբրև լուծողական, փխսեց-
նող, և առաջացնում է նյարդային
քայքայումներ: Պատահում է թփերի
մեջ ամեն տեղ:

38. Մասիսեղ: Բարդածաղիկների
ընտանիքից: Տես նկ. 37. բազմամ-
յա յե: Ցողունը թեթև մաղապառ,
մինչև $\frac{3}{4}$ մետր բարձրությամբ:
Ճյուղերը միայնակ գլխիկներով: Տե-
րևները նստած, նշտարած, ստե-
րինները ատամնաձև: Ծաղիկները
հավաքված են վարդազույն գլխիկ-
ներով: Թունավոր է համարվում
ձիերի և վոջարների համար, վո-
րոնց մեջ կարող է մահ պատճառել:

Պատահում է ամեն տեղ աղահո-
ղային տափաստաններում:

ՇՈՒՇԱՆԱԶԳԻՆԵՐԻ ՄԻԱՇԱԲԻԼ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ

39. Սպիտակ չփառի (վրաց կոնդ) տես նկ. 38. բազմամ-
յա յե, ցողունը կլոր, սնամեջ, մինչև 1 մետր եռվելի բարձ-
րությամբ: Տերևները ներքևում լայն ձվաձև են, վերևում
յերկարավուն: Ծաղիկները յուրանաձև: Ծաղիկները սպի-
տակ կամ կանաչավուն սպիտակ, ստողաձև: Բույսը խիստ
թունավոր է, առանձնապես արմատները և կոճղարմատ-
ները: Չորացնելիս թունավոր հատկությունը չի կորցնում,
վտանգավոր է նաև խոտի մեջ, վորտեղ նրա թույնը ծըծ-
վում է հարևան բույսերի մեջ:

Թունավորումը սկզբում ուղեկցվում է հուզումով, հետո
փխսով, շղաճուլթյուններով, փորագնացությամբ, կաթվա-
ծով և մահով:



38. Սպիտակ չփառի

Պատահում է յերկրամասում խոնավ մարգագետիններում
և թփերի մեջտեղերում:

40. Սեվ չփառի: Նման է նախորդին: Ծաղիկները մութ
կարմրազույն են: Թունավոր հատկությունը և այլն նույնն
են, ինչ վոր սպիտակ չփառումը:


41. Հովսաօուեան. տես նկ. 39. բազմամյա յի սողացող
կոճղարմատով: Գետնապերևի մասը 2 ձվաձև, լայն, յերկայ-
նականթ տերևներ ունի: Ծաղիկները սպիտակ են, դանդա-
կաձև, հավաքված են վոզկուլաձև: Պտուղը կլոր, մաշի հա-



39. Հովտաշուշան

տապտուղ ե: Թունավոր են բույսի բոլոր մասերը, գլխա-
վորապես գետնապերևի: Կենդանիների վրա հովտաշուշանը
լուծողական ազդեցութիւնն է գործում, նույնպես և ուժեղ
կերպով ներգործում է սրտի վրա: Հովտաշուշանը գլխավորա-
պես տարածված է անտառներում և թփերի մեջտեղերում:


42. Դասայինն ձիաձեռ. (Սպորատուներից ձիաձեռազի-
նների ընտանիքը): Տես նկ. 40. բազմամյա բույս է, նման
մատաղ յեղևնուն: Ցողուն տալիս է վաղ դարնան: Չոր դրու-



40. Դաշտայինն ձիաձեռ

թյամբ նրան ավելի վտանգավոր են համարում, քան թարմ:
Նոսր յերկար պահելիս ձիաձեռի թունավոր հատկութիւնը
պակասում է: Ամենամեծ վնասը ձիաձեռը բերում է սպոր-

ների առաջացման ժամանակ: Ջրածնի, իրեն կեր, գործածությունը կաթը ավելի ջրիկ և դարձնում և նա ստանում և կապտավուն գույն:



41. Գայլապտուղ

դեղնադուլն ծաղիկը: Պտուղը — միահատ, սև-կապտադուլն հատապտուղ և թունավորման ժամանակ նկատվում և փխսում, փորագնացություն, ջրածություններ, կաթված: Պատահում և խոնավ և սովորաբար տեղերում, անտառում, խիբրի միջին:

ՎՆԱՍԱԿԱՐ ՎԱՅՐԻ ԲՈՒՅՍԵՐ

Վնասակար բույսերից կարելի չեն նշել հետևյալները.

1. Բադմեճիկներ (ռեինդր, աղու առոս), վորոնց դառն համն անցնում և կաթին:

Առավել զգայուն են դեպի ձիածնները ձիերը, վորոնց մեջ նա առաջացնում և կաթված, ջրածություններ, սեփական շարժումները կառավարելու անընդունակություն:

43. Գայլապտուղ: Միապտղիկ և, խաչատերև: Տես. նկ. 41. բազմամյա յի: Ցողունը ուղիղ, 15—30 սմ բարձրությամբ, վերևում սովորաբար գտնվում են 4 հատ խաչածև դասավորված տերևներ: Տերևները ձվաձև, սրացած: Մեջ տեղում գտնվում և կանաչավուն

2. Վայրի սոխեր, սխտրներ, վորոնք տալիս են կաթին և ուրիշ մթերքներին սխտրի հոտ և փչացնում են խոտը:

3. Թրքնուկը յիլ մանր քրքնուկը շատ թթու արոտներ են, վորոնց ուտելուց կաթը վատ և հարվում և ահաճ համ և ստանում:

4. Վայրի խաչածաղիկներ — շինկոտեմը, վայրի բողկը և մյուսները: Նրանք տալիս են գրգռիչ կեր, կաթին հաղորդում են շաղգամի կամ բողկի համ:

5. Փեսախոսներ (խլդան) (բրոմ, խրտցակ և մյուսները) սրածայր սերմերով խցկում և փչացնում են կենդանիների բուրդը և կաշին, որինակ, վոչխարներին: Ներս թափանձիով կաշվի միջով դեպի արյունը — խրտցակը (բրոմ) կարող և առաջացնել մահ:

6. Բախերը, յեղեգները, կնյունները իրանցից ներկայացնում են սովորաբար կոշտ, սակավասնունդ կեր: Նրանց գործածությունը առաջացնում և սակավարյունություն, թուլություն, դարձնելով կթվող կենդանիների կաթն ավելի ջրիկ, անկայուն: Միլոսացումը լավացնում և այս կերերի հատկությունը:

7. Մի օարբ ուրիշ բույսեր անբարենպաստ կերպով ներգործում են կենդանիների վրա իրանց ծակող կամ կարծր մասերով, առաջացնելով մարսողական գործարանների մեխանիկական վնասումներ — որինակ՝ կարադան, տատառկափուշ, սովորական տատառկ, ոնոպորդոն և այլն:

ԹՈՒՆԱՎՈՐ, ՎՆԱՍԱԿԱՐ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԲՈՒՅՍԵՐ

Նրանցից նշենք հետևյալները.

1. Գեմագեղակ (արքայություն ծառ կադանյանների ընտանիքից). տես նկ. 42. նա մշակվում և իր սերմերի համար, վորոնցից ստանում են լուծողական յուղ: Ամբողջ բույսը թունավոր և, առանձնապես քուսպերը և սերմերը: Գեմագեղակով թունավորվելը կարող և մահ պատճառել:

2. Կարտոֆիլը: Կարտոֆիլի պալարները հրաշալի կեր են հանդիսանում անասունների, առանձնապես խոզերի համար: Զհասունացած, ծլած, սառած և փտած պալարներով կերակրելու ժամանակ, նույնպես և չափից դուրս մեծ քանակությամբ կերակրելու դեպքում, առաջանում է կենդանիների հիվանդություն: Ծրող պալարների ծիլերը առանձնապես թունավոր են: Յեփած կարտոֆիլը կորցնում է իր թունավոր հատկությունը, խաշուն լակի մեջ տալ չի կարելի, վորովհետև նրա մեջ անցնում է թույնը մաշկից: Ծաղկելու ժամանակ կամ ավելի ուշ հնձված կանաչը կենդանիների համար ֆիսասակար է: Միևսացումը նրան դարձնում է պիտանի իրեր կեր:



42. Գեմագերչակ

3. Սագոն (հացաբույսերի ընտանիքը) մեղանում մշակվում է սերմի, սիլոսի, ավելի համար և այլն: Սորդոն — թունավոր բույս չէ, բայց նրա աշնանախոտը աճելուց հետո լինում է թունավոր, առանձնապես յերաշտի ժամանակ կամ սառնամանիքներից հետո: Թունավորումը արագ է լինում և կարող է կենդանուն կորցնել: Այդ ինկատի ունենալով սորդոն հնձելուց հետո անասուններին աշնանախոտի վրա, նրա նորից աճելուց հետո առաջին որերը բաց թողնել չի կարելի:

4. Կուլսուրակաճ խաշառ. բույսի մասերը, բացի սերմերից, թունավոր են, առանձնապես չհասունացած դրությամբ:

5. Մանանիս, խճի. նկ. 43. Նրանք կենդանիների վրա ներգործում են նույնպես, ինչպես և վայրի խաշածաղիկները: Յուզատու խաշածաղիկների քուսպերը, նույնպես փնասակար են լինում նրանց ուտիչ շուտ գուրդիացող նյութերի պարունակությամբ դեպքում:

6. Սովորական ծխախոտը յեղմախոտից. տես նկ. 44. Նա պարունակում է ուժեղ թույն — նիկոտին: Թունավոր է ամբողջ բույսը, առանձնապես տերևները: Ծխախոտով թունավորվելը առաջացնում է դող, անհանգստություն, ջղաճկություններ, բերբերի փոքրանալը, կաթվածի եր: Առավելագույն զգայուն են զեպի ծըխախոտը խոշոր յեղջուրավոր անասունները և աշծերը:



43. Մամանիս, խճի

7. Պատիճավոր արտեմիս. որինակ՝ յոնջան, յերեքնուկը և մյուսները հանդիսանում են շատ տարածված և լավ կերախոտեր: Մակայն նրանցով կանաչ դրությամբ, հատկապես ցողով կամ անձրևով թրջված դեպքում կերակրելը շատ վնասակար է, վորովհետև կենդանիները հեշտությամբ հիվանդանում են փորի ուռեցքով (տիմպանիտով): Հիվանդությունը արագ է վրա հասնում և կարճ ժամանակում, 2—3 ժամի ընթացքում կարող է ամբողջ նախիրը վոնջացնել: Ավելի հաճախ և ուժեղ կերպով հիվանդանում են վորոճող կենդանիները:

Տիմպանիտից ազատվելու համար պետք է. 1) անասուններին պատճալորներին արտատեղում արածացնել նախո-

բոք նրանց կերակրելուց հետո: Անհրաժեշտ է այդ նրա համար, վորպեսզի անասունները հուժ խոտը Հափից դուրս Հուտեն, 2) Հպետք է նրանց յերկար ժամանակ պահել արտատեղի վրա, 3) Բաց Հիօդնիկ նախիրը ցողի ժամանակ կամ անձրևից հետո, այլ թողնել վոր նախապես արոտը Հորանա:




44. Սովորական ծխախոտ յնվ մխարկա

կահեղափոխական տարրերն անկասկած պիտի փորձեն, հաշվի առնելով պատիճավոր արտոնների մատնանշված վերոհիշյալ առանձնահատկությունները և նրա արժեքը, կոլտնտեսային և խորհրդատեսային նախքին խոշոր կորուստ հասցնել:

Մյուս կոլտնտեսական բույսերից մնասակար են լինում հնդկացորենը, զայլուկը, ագարիկոնը, կանեփը, լյուպինները, տափուրը և այլն. վորովհետև սրանք Հյուսիսային հովիտում հազվագյուտ են պատահում, մենք նրանց վրա կանգ Հպետի առնենք:

ԲՈՒՅՍԵՐԻ ՇԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՎՈՐՈՒՔ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՆ ԿԵՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՍԻ

Յեղջերասունկը (յեղջուրներ). տես նկ. 45. նա մնասում է հացաբույսերին, զլիսավորապես հաճախն, ավելի քիչ գարուն, ցորենին, սեղին և այլն: Վնասված բույսերի հասուն նանալու ժամանակ յեղջերասունկը ներկայացնում է իրանից սև-մանիշակադուլն, ներսում սպիտակ յեղջուրներ, վորոնք դուրս են ցցվում հասկից: Այս յեղջուրները շատ թու-



45. Յեղջերասունկ

նավոր են և ընկնելով հատիկների, ալյուրի, յերբեմն ել խոտի մեջ, առաջացնում են մի շարք ծանր հիվանդություններ: Թունավորումը արտահայտվում է հղի կենդանիների վիժումներով, նյարդային տառապումներով (շգաճգություն), մարմնի մի քանի մասերի—մատների, ականջների, ստինքների և այլն անզգայացումով (չոր գանգրենա):

Յեղջերասունկի դեմ կովի նախազգուշացուցիչ միջոցներն են — հատիկների մաքրելը յեղջուրներից, կերերի խոտախումբ:

Փոփոխուելով, (մրիկը — զոնա) տես նկ. 45. փոշեսուռնիկը նույնպես վնասուած է հացաբուսերին: Նա պատահում է զանազան տեսակներով, վորոնցից վոմանք քայքայում են հատիկը, վոմանք էլ ամբողջ հասկը, մյուսներն էլ ցողունը և այլն:

Փոշեսնկով վարակված կերը առաջացնում է մի շարք ծանր բանաբուսներ (սանջուռ, փորագնացություն, ջղաձգություններ, վիժումներ և յերբեմն էլ մահ):

Աւրացողը (սնկային հիվանդություն) վնասում է հացաբուսերի, պատիճավորների և ուրիշ բուսերի կանաչ մասերը: Նա առաջացնում է սպիտակ, արանման փառեր: Աւրացողը առաջ է բերում մարսողական գործարանների և յերիկամուռների բորբոքում, նույնպես և վիժումներ:

Ժաճգային սնկիկները վնասում են հացաբուսերի և ուրիշ բուսերի ցողունները, տերևները, առաջացնելով նրանց վրա ժանդային-կարմրագույն կամ սևագույն խորշեր կամ բծեր: Թունավորումը շատ բաներով նման է փոշեսնկին:

Բարձրները յեվ փախսները նույնպես վնասակար են կերի վերաբերմամբ:

ԹՈՒՆԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐՆ ԻՐԵՎ ՏԵՂԱՅԻՆ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՈՒՍՈՒՅՑ

Թված թունավոր բուսերից շատերը մեծ արժեք ունեցող հումույթ են հանդիսանում զանազան դեղեր ստանալու՝ տեխնիկական և արտահանության նպատակների համար:

Վերջին ժամանակներում նրանցից միջոտնիսը հատկապես սկսեցին մշակել ԽՍՀՄ-ի դաշտերում և այսպիսով անցան կուլտուրական բուսերի կարգը, որին աչել՝ մահացու մորմը, մատնեաուռնիկը և ուրիշները:

Միջանի բուսերի վորևե մասն է ոգտագործվում (աւրմատները, կամ կոճղորմատները, կամ տերևները), մյուս-

ների մի քանի մասերը կամ ամբողջ բույսն է ոգտագործվում:

Գործի պատշաճ կազմակերպության դեպքում վայրի թունավոր բույսերի հավաքումը խորը չափով կուժեղացնի Միության դեղային-տեխնիկական հումութի բազան և կուտնտեսության մեջ յեկամտի զգալի ոգոված կկազմի: Սրա հետ միաժամանակ կոիվ կսղվի թունավոր բույսերի դեմ:

Ռացիոնալ կերպով հավաքումը անցկացնելու համար աւհրաժեշտ է ճիշտ գիտենալ, ինչպիսի բույսեր են նշանակված հավաքելու համար տվյալ տեղում, յերբ հավաքել նրանց, վոր մասերը, ինչպէս նրանց չորացնել, պահել, ուղարկել և այլն: Դրա համար հարկավոր է ոգտվել հատուկ հրահանգներով դեղտեխնոլոյթը հավաքելու համար:



Ուսուցիչ	Լատիներեն	Հայերեն
Аван аптечный	Graciola officinalis L	Բժշկական տերեփուկ
Белена черная	Hyosciamus niger L	Սև մոլեխիկ
Белладонна	Atropa Belladonna L	Մահացու մորմ
Бодяк	Cirsium L	Տառասկախուշ
Болиголов	Conium maculatum L	Խնդակոթ, խնդամուկ, պիսակ
Борец антора	Aconitum Anthora L	Ակոնիտ, բմբախոտ, բնձախոտ
„ синий	„ Napellus L	Կապույտ բմբախոտ
Бутень одуряющий	Chaerophyllum temulum L	Կերկուկ, խնդատերեկ
Василистики	Thalictrum L	Քնձմնուկ
Вегреница	Anemone ranunculoides L	Պուտ, պուտիկ կոտորոզ
Вех ядовитый	Cicuta virosa L	Ջրու մոլեխիկ
Волчьи ягоды	Parisquadrifolia L	Տերևատ, քառատերեկ
Вороний глаз	Daphne mezereum L	Գալլապուտուկ
Вязиль	Coronilla varia L	Յերկինբանդ քարապուշ
Головия	Tilletea, Ustilago	Փռչնուռնի, մրիկ, զոնա
Горицвет весенний	Adonis vernalis L	Ադոնիս, գարնանային շողալարդ
Горчак	Acroptilon picris C. A. M.	Մատիտեղ
Горчица	Sinapis	Մանանեխ
Дурман	Datura stramonium L	Արջբուխուկ
Желтушник	Erisimum canescens Roth.	Կանթեղախոտ
Железница	Sideritis montana L	Հենային յերկաթուկեր
Живокость	Delphinium Consolida L	Դաշտային դելֆին
Жигунец	Clematis pseudoflammula	Պատաղիճ
Звездочка	Stellaria graminea L	Աստղածաղիկ
Зверобой	Hipericum perforatum L	Հիպերիկոն կամ հաստբալ պսպղակ
Колужница болотная	Caltha palustris L	Ցինգ, վոսկեծաղիկ
Кир-азон	Aristolochia Clematidis	Կիրկազոն, սղանդ
Клевер	Trifolium L	Առվույտ, յերբնուկ
Клещевина	Ricinus communis L	Գենադերեյակ, սերգին բակրա
Ковыль	Stipa	Փետրախոտ, իլդան

Кокорыш	Aethusa cyrapium	Շնակարոտ, շունի (շան մաղդանոտ)
собачья петрушка	Asarum europeum L	Սթեր կամ ազարիոն (մրվատունի) կաղնուրե
Копытень		
Куколь	Agrostemma gitago	Վորոմ, գյուլալ
Ландыш майский	Convallaria majalis L	Հովտաշուշան
Ломонос	Clematis vitalba L	Վալբի պատաղիճ
Лютик	Ranunculus L	Գորանուկ, հրանուռնի
Лк черна	Medicago L	Յոնջա, առվույտ
Мак снотворный	Papaver somniferum L	Խաշիաշ բնաստեղծ
Мак самосейка	„ rhocas L	Խաշիաշ ինքնա սեր
Можжевельник казачий	Juniperus sabina L	Յիրդ, զին
Молочай	Euforbia	Կաղանջան
Мучная роса	Erysiphe	Ալլապուդ
Мытник хохлатый	Pedicularis comasa	Փնջավոր մաքախոտ
Наперстянка крупноцвет	Digitalis	Մատենաունիկ
Осоки	Carex L	Բոշխ, յափու
Паслен сладко-горький	Solanum dulcamara L	Կողուկ կամ քաղձրադառն մորմ
Пасл н черный	„ nigrum L	Սև մորմ
Переступень белый	Bryonia a-ba L	Սպիտակահատ լոշտակ
Погромк большой	Rhinanthus major Ehrh	Արլորարբուկ
„ малый	minor Ehrh	Բարձմենիկ, ոշինդը, աղու արոտ
Полынь	Artemisia L	Վալբի բողկ
Редька дикая	Raihainis	Ժանգային սնկեր
Ржавчинные грибы	Pussinia	Դեղին մրտավարդ
Рододендрон желтый	Rhododendron flavum D	
Сибирек	Caragana frutescens D	Կարագան
Ситник	Juncus L	Կնյուն
Сон трава	Anemone Pulsatilla L	Անեմոն, մուլի մորմ, շնախաղող
Спорынья	Claviceps purpurea	Յեղջերատունիկ
Сурепица	Brassica vulgaris L	Գոնգեկ
Сурепка	Brassica cinapistrum Boiss	Խճի
Татарник	Onopordon Acanthium L	Ուսպորտոն
Хвощ полевой	Equisetum arvense L	Դաշտային ձիածեղ
Чемерица белая	Veratrum album L	Սպիտակ չքրտամի
Чертопол х	Carduus L	Տառասկախուշ
Щавелек, щавель	Rumex acetosella L	Քրթնուկ մանր, բոր-շի արոտ
Ярутка	Thaspi arvense L	Շինկոտեմ



3569

С. Х.

Ответственный редактор Г. Я. ПОТЕНЦ
Технический редактор О. С. Тер-Давыдов
Сдано в набор 1/XII 1933 г.

Подписано в печать 21/XII 1933 г.

Статформат Б6 125x176

Уподрайлита № Б 601

Объем 1 1/2 л. Заказ № 605. Тираж 1000
Типография им. «Стачки» 1902 г. СККПТ
Ростов на-Дону

ՀՀ Ազգային գրադարան



NL0289544

Գրքի
Цена 40 Կոպ.
Коп.

17951

988-55



На армянском языке

Н. Н. Фесенков и О. М. Полякова

**ЯДОВИТЫЕ И ВРЕДНЫЕ ДЛЯ ЖИВОТНЫХ
РАСТЕНИЯ СЕВЕРО КАВКАЗКОГО КРАЯ**

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱԴԱՆԾԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՍՈՍՈՐԱԿԱՆ ՓՈԼ. № 53

ԳՐԱԿԱՆԱԳՐԱՆ (ԿԵՆՏՐԱԼԻ)